

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

28.04.2014

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը ապրիլի 28-ին ընդունեց Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավարի տեղակալ, քաղաքական, տնտեսական, մամուլի եւ տեղեկատվական բաժնի ղեկավար Դիրկ Լորենցին: Հանդիպման սկզբում ԵՄ ներկայացուցիչը նշեց, որ Հայաստանում Եվրամիության պատվիրակությունը ցանկություն ունի համագործակցել նաեւ մարզերի հետ, եւ այդ շրջանակներում էլ կատարվել է հերթական այցը, որն ավելի շուտ ունի ճանաչողական նշանակություն, բայց պետք է ձեռք բերի նաեւ ավանդական ուղղվածություն: ԵՄ ներկայացուցիչը նշեց, որ օրվա քննարկման թեմայի առանցքում Հայաստան-ԵՄ հարաբերություններն են, հետագա համագործակցության հեռանկարները:

„Թեեւ մենք Հայաստանի հետ չկարողացանք հասնել Ասոցացման համաձայնագրի ստորագրմանը, բայց դա չի նշանակում, որ դադարեցնում ենք մեր հարաբերությունները, ավելին, մենք պետք է շարունակենք մեր համագործակցությունը այն ուղղություններում, որոնք պետք է որոշենք համատեղ քննարկման արդյունքում,,-շեշտեց Լորենցը:

Ողջունելով Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավարի տեղակալի այցը՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը նշեց. „Իմ կարծիքով, համաեվրոպական համագործակցության հիմնական ուղղվածությունը կայանում է երեք ուղղություններով՝ ժողովրդավարություն, օրենքի գերակայություն եւ մարդու իրավունքների պաշտպանություն, որոնք դրված են Հայաստանի Հանրապետության պետականաշինության հիմքում, եւ մենք բոլոր ուղղություններում առաջ ենք շարժվում: Ինչ վերաբերվում է Արեւելյան գործընկերության ներքո իրականացվելիք բարեփոխումներին, ապա վերջին 3-4 տարիների ընթացքում մենք բավականին առաջընթաց ենք արձանագրել ժողովրդավարության ամրապնդման, կոռուպցիայի դեմ պայքարի, պետական մարմինների աշխատանքների թափանցիկության, դատական իշխանության համակարգի անկախացման, ազատ եւ արդար ընտրությունների կազմակերպման, քաղաքացիական հասարակության կայացման ուղղություններում,,: Մարզպետն այս հարցերից դուրս կարելուր համարեց նաեւ Հայաստանի եւ ԵՄ անդամ երկրների քաղաքացիների շփումների անհրաժեշտությունը եւ վիզային ռեժիմի դյուրացման խնդիրները:

Զրույցի ընթացքում կողմերը կարծիքներ հնչեցրին նաեւ հայ-թուրքական հարաբերությունների, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման հետ կապված խնդիրների շուրջ: „Դեպի Եվրոպական Միություն ձգտող Թուրքիան ոչ միայն շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, այլ նաեւ իր

Ժխտողական քաղաքականությունն է փորձում պարտադրել ԵՄ անդամ երկրներին եւ փակ է պահում Հայաստանի հետ սահմանը: Ամենակարեւոր արժեքներից մեկն արդի աշխարհում մարդկանց տեղաշարժն ու փոխադարձ շփումներն ապահովելն է, մինչդեռ Թուրքիան ամուր փակել է սահմանը Հայաստանի առջեւ, եւ ոչ մի արձագանք չի հնչում ԵՄ անդամ որեւէ երկրի կողմից: Ավելին, որպէս Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման նախապայման, Թուրքիան առաջ է քաշում Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման իր տարբերակը, այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղն ինքնորոշվել է հենց եվրոպական արժեքների հիման վրա: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հիմնադրման օրվանից որդեգրել է ժողովրդավարության եվրոպական ուղին եւ արժեքները, այնտեղ այժմ գործում են ժողովրդավարական պետական ու հանրային բոլոր ինստիտուտները, սակայն նրա միջազգային ճանաչման, անվտանգության ապահովման գործում Թուրքիան եւ Ադրբեջանը շարունակում են լուրջ խոչընդոտներ ստեղծել,- շեշտեց Գեղարքունիքի մարզպետը: Անդրադառնալով մարզպետի հարցադրումներին՝ ԵՄ ներկայացուցիչը նշեց, որ այսօր ԵՄ-ն ձգտում է Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը եւ Թուրքիայի, Հայաստանի ու Ադրբեջանի հասարակությունների հաշտեցմանը, որը, իհարկէ, մեկ օրվա կամ կարճ ժամանակի խնդիր չի: „Թեւ Հայաստանը բոլորիս հասկանալի պատճառներով չի ստորագրել Ասոցացման համաձայնագիրը, սակայն մենք կարող ենք մեր իրավական հարաբերությունները կարգավորել մեկ այլ փաստաթղթով: Համագործակցությունը չի կարող պայմանավորված լինել միայն Ասոցացման համաձայնագրով, եւ ես համոզված եմ, որ Հայաստանի իշխանությունները կշարունակեն համագործակցության քաղաքականությունը, եւ մեր մարզն էլ անմասն չի մնա այդ համագործակցությունից,- հավաստիացրեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: